ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ԳՀԽ-ին և միաբանությանն ուղղված ցավակցական գիր է ուղարկել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ նշելով.

«Խոր վշտով տեղեկացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի վախճանի մասին: Վեհափառ Հայրապետը Ամենայն Հայոց հովվապետության, ինչպես նաև իր ամբողջ կյանքի ընթացքում մեծ իմաստնությամբ ու բացառիկ նվիրումով ծառայեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և իր ժողովրդին Մայր Հայրենիքում և Սփյուռքում:

Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին, միաբանությանը և համայն հայությանը:

Թող Աստված խաղաղության մեջ ընդունի սիրելի Հայրապետի լույս հոգին»:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ